ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական

Հետազոտական աշխատանք

Թեմա

Պատմվածքի ուսումնասիրման

Առանձնահատկությունները երկրորդ դասարանում

Կատարող

Համեստուհի Ռոլանդի Սարգսյան

Ջաջուռի միջնակարգ դպրոցՊՈԱԿ, դասվար

Ղեկավար՝ Սիրվարդ Թամազյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5
2.ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ 11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության բարենպաստ միջավայրի աստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական ձևերի ու մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի նորովի ճշգրտում:

Հայաստանի Հանրապետության ազգային դպրոցը, որը հսկայական նվաճումներ ունի կրթության և դաստիարակության համակրգում, ներառված է կրթական բարեփոխումների դժվարին գործընթացի մեջ, որը նպատակաուղղված է մի կողմից ընդհանուր հասարակական կրթության հիմնախնդիրների լուծմանը, մյուս կողմից՝ ազգային կրթության առանձնահատկությունների զարգացմանը, ազգային արժեքների գնահատմանն ու պահպանմանը:

Այս դեպքում կարևորվում է այն հանգամանքը, որ կրթությունը անհատի, հասարակության և պետության շահից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

«Մայրենի 2» դասագրքերի ընթերցանության նյութերի (պատմվածքների) միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածը և վերարտադրել (պատմել), այլև դրանց բովանդակությունը հնարավորություն է ընձեռում գիտելիքներ ձեռք բերել մայրենիի, ազգային արժեքային հասկացությունների՝ ընտանիքի, ընկերասիրության, հայրենասիրության, բարեկիրթ հաղորդակցության, ազնվության, Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, մշակույթի մասին: Միաժամանակ պատմվածքի ուսումնասիրման միջոցով երեխաները ձեռք են բերում աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ. զարգանում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը, ձևավորվում է լեզվամտածողությունը:

Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների ձգտումների, արժեքների, ճիշտ վերլուծությունը կրտսեր դպրոցականների մեջ որոշակի բարոյական արժեքների ձևավորման, տրամաբանական հետևությունների հանգեցնելու անփոխարինելի միջոց են:

Ներկայացրած ավարտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տարրական դպրոցի ուսումնական գործընթացի խնդիրներն ու առանձնահատկությունները, այդ հիմնապատկերի վրա դիտարկել պատմվածքի ուսումնասիրումը երկրորդ դասարանում, վեր հանել դասագործընթացի ուժեղ և թույլ կողմերը, վարել մի շարք հեղինակային դասեր՝ փորձելով աշակերտների մոտ ձևավորել մի շարք որակներ: Նպատակներն իրագործելու հանար մեր առջև դրել ենք որոշակի խնդիրներ, որոնցից կարևորագույնն են՝

- ձևավորել կարդացածը հասկանալու կարողություն,
- զարգացնել սովորողների մտածողությունը և երևակայությունը,
- հարստացնել բառապաշարը նորածանոթ բառերով,
- ձևավորել հերոսների արարքների, նրանց վարքագծի գնահատման կարողություններ,
- դերերով, երկխոսություններով և խաղերով կարդացածը հասկանալու կարողության զարգացում,
- ձևավորել սեփական կարծիքներ կազմելու հմտություններ,
- զարգացնել սովորողների բանավիճելու կարողությունները,
- հաղթահարել պատմվածքի ուսումնասիրման ժամանակ առաջացած դժվարությունները:

Ուսումնասիրության համար գիտամեթոդական հիմք են ծառայել հայրենական մեթոդիստների՝ Ա. Տեր-Գրիգորյանի, Ջ. Գյուլամիրյանի հայոց լեզվի մեթոդիկաները, «Մայրենի 2» դասագրքերի մեթոդական ուղեցույցները:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են ուսուցման տարբեր մեթոդներ, հնարներ, մոտեցումներ՝ կրտսեր դպրոցում դասալսումներ, մայրենիի դասերի և դասագրքերի վերլուծություն, զրույց, դիտում, խմբային աշխատանք և այլն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ :

ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմվածքի ուսումնասիրման խնդիրն է զարգացնել ոչ միայն երեխաների մտածողությունը, տրամաբանությունը, այլև նրանց առջև դնել մշտական գործունեության պլաններ և աշակերտների միտքը զբաղեցնել հասարակական օգտակար աշխատանքով: Մտածողությունը բնականոն երևույթ է, որը հատուկ է երեխային իր ձևավորման վաղ շրջանից և գործունեության մեջ անընդհատ զարգանալով՝ կատարելագործվում է: Երեխայի գործունեության տեսակները սերտորեն շաղկապված են և փոխադարձաբար լրացնում են միմյանց: Հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում մանկական մտածողությունն ակտիվ կերպով զարգանում է խաղի միջոցով: Խաղը նրա մեջ բորբոքում է հետաքրքրություն, հարցասիրություն, նոր տպավորություններ է առաջացնում և նպաստում նրանց ներդաշնակ զարգացմանը:

Մայրենիի ժամանակակից դասի համատեքստում էական նշանակություն է ձեռք բերում պատմվածքի ուսումնասիրումը: Նշելի է, որ պատմվածքը դասվում է գեղարվեստական ստեղծագործությունների շարքին: Այն գրականության ժանրերից է և փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է: Եթե պատմվածքը համեմատենք վիպակի հետ, ապա այստեղ դեպքերի նկարագրությունը շատ սեղմ է ու հակիրճ; Գործողությունները սահմանափակ են, դեպքերը զարգանում են ավելի սովորական, հանդարտ ընթացքով: Պատմվածքում հեղինակը երբեմն շեղումներ է կատարում, պատկերում է բնության տեսարաններ, հոգեվիճակներ, այն իր լուծումները ստանում է ավելի սովորական ձևով: Պատմվածքը պատկանում է «փոքր էպիկական ձևին»: Պատմվածքն իր արմատներով կապվում է նաև բանահյուսության հետ, որտեղից էլ գալիս են նրա հիմնական առանձնահատկությունները՝ վիպելու և պատմելու հատկանիշը: Բարձրարժեք պատմվածքում արտացոլվում են կյանքի էական կողմերը, կատարվում են ընդհանրացումներ, կերտվում գեղարվեստական կերպարներ:

Տարրական դասարանների դասագրքերում հիմնականում զետեղված են իրապատում պատմվածքներ կամ պատմություններ, որոնք գրավում են այդ տարիքային խմբի երեխաներին:

Պատմվածքի ուսումնասիրման գործընթացում պետք է կարևորել ոչ միայն նրա

գեղարվեստական արժեքը, այլև ճանաչողական և դաստիարակչական հնարավորությունները: Պատմվածքի ուսումնասիրումը իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերով:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականներն ավելի հեշտ են ընկալում պարզ կառուցվածքով, քիչ հերոսներով և մատչելի գաղափարներով ստեղծագործությունները: Իսկ այն պատմվածքները, որոնք ունեն բարդ իմաստ, այսինքն՝ իմաստային առումով ավելի բարդ ընկալելի են երեխաների համար, ավելի դժվարությամբ են յուրացվում:

Որպեսզի պատմվածքն ավելի հասանելի լինի և հասկանալի, ճիշտ ուսումնասիրվի սովորողների կողմից, հարկավոր է, որ ուսուցիչը նախօրոք պլանավորի և լրջորեն նախապատրաստվի դասին: Ուսուցիչը պետք է լավ իմանա պատմվածքի յուրաքանչյուր պարբերությունը, նախադասությունն ու բառը: Առանց նախապատրաստվելու նույնիսկ փորձառու ուսուցիչը չի կարող անթերի կատարել գեղեցիկ ընթերցումը: Լավ կարդացող ուսուցիչը երեխայի մեջ հետաքրքրություն է առաջացնում դեպի գեղարվեստական ստեղծագործությունը;

Սկզբնական փուլում ուսուցիչը սկսում է նախապատրաստական զրույցից և նախապատրաստական աշխատանքներից: Ինչպես նշվեց, աշակերտի ընթերցման գեղեցիկ օրինակ է ուսուցիչը, ուստի այդ է պատճառը, որ 2–րդ դասարանի 1–ին կիսամյակում ուսուցիչը հենց ինքը պետք է կարդա պատմվածքի բնագիրը, իսկ լավ կարդացող աշակերտների առկայության դեպքում կարելի է վստահել նրանց:

Պատմվածքի առաջին ընթերցման նախապատրաստելու ուղղությամբ կատարվող աշխատանքները կարող են լինել տարաբնույթ, սակայն դրանց ընդհանուր նպատակը նույնն է. բոլոր երեխաներին ներգրավել թեմայի մեջ և հոգեբանորեն նախապատրաստել ընթերցածը ճիշտ և խորը յուրացնելու համար: Նախապատրաստական աշխատանքները կատարելուց հետո գալիս է ամբողջական ընթերցումը, որի ընթացքում ուսուցիչը, իր ուշադրությունն ուղղելով գեղեցիկ ընթերցանությանը, մի կողմ պետք է թողնի բնագրում եղած առանձին մտքերի ու բառերի բացատրությունը; Բառաբացատրությունը ուսուցիչը տալիս է պատմվածքը կարդալուց հետո: Շահեկան է, որ ուսուցչի կարդալուց հետո բնագիրը կարդան երեխաները մտքում կամ շշուկով. սա ևս նպաստում է նյութի հասկացմանն ու ընկալմանը: Կան երեխաներ, որոնք մինչև իրենք չկարդան, չեն կարող հասկանալ

կարդացածը:

Բնագրի ամբողջական ընթերցումից հետո տրվում է բնագրի ընթերցումը մասերով: Ընթերցանության այս տեսակն իրականացնում են աշակերտները, իսկ ուսուցիչն այդ գործընթացի կազմակերպիչն է, ուղղորդողը:

Ինչպես գիտենք, դասարաններում կան տարբեր ունակություններ և առանձնահատկություններ ունեցող երեխաներ: Ուսուցչի խնդիրն է ներգրավել բոլոր երեխաներին, դիտարկել և գնահատել նրանց արժեքային համակարգը և մասնակից դարձնել դասագործընթացին:

Պատմվածքի ուսումնասիրման մյուս փուլը կոչվում է աշխատանք բնագրի շուրջ: Երբ երեխաները կարդում և վերջացնում են բնագիրը մասերով, զրույցի և հարցերի միջոցով նրանք ոչ միայն ըմբռնում են ստեղծագործության մեջ նկարագրված դեպքերը, տրամաբանությունն ու հաջորդականությունը, այլև հասկանում են կարդացածը, կատարում պարզ դիտարկումներ, մեկնաբանություններ և համեմատություններ:

Ուսուցիչը երեխաների հետ միասին հարցերի միջոցով բացահայտում է հերոսների բացասական և դրական գծերը՝ միաժամանակ լուծելով դաստիարակչական մի շարք խնդիրներ: Այս ամենն օգնում է երեխաներին նախապատրաստվել բնագրի պատմելուն: Բնագրի պատմելու ժամանակ ուսուցիչը չպետք է կաղապարի աշակերտին, որովհետև կլինեն աշակերտներ, որոնք սիրում են ստեղծագործել և դասը կարող են պատմել օգտագործելով իրենց մտքի թռիչքը:

Տարրական դպրոցի ուսուցիչը պետք է խուսափի այն հարցադրումներից, որոնք կանխում են աշակերտի ինքնուրույն մտածողությունը; Պատմվածքի ուսումնասիրումը ոչ միայն պետք է նպաստի երեխաների կարդալու կարողության զարգացմանը, այլև նրանց մեջ ձևավորի երևակայելու, պատկերացնելու, քննարկելու ունակություններ:

Դասի հաջորդ փուլը պատմվածքի բովանդակության վերարտադրումն է կամ պատմումը: Երեխաները հանձնարարություն են ստանում, որ դասը բացի լավ կարդալ կարողանալուց, նաև կարողանան կարդալ դերերով, այնուհետև կարող են փոքրիկ բեմականացում կազմակերպել՝ ելնելով բնագրից;

Այսպես՝ ուսումնասիրենք երկրորդ դասարանի դասագրքում զետեղված «Մայրիկի ծաղիկը» փոքրիկ պատմվածքը: Ուսուցիչը հանձնարարում է մեկին լինել

հեղինակը, մյուսին՝ Արփենիկը, մեկ ուրիշին՝ մայրիկը. ընտրում են չորս ծաղիկներ և թիթեռներ: Այնուհետև իրականացնում են բեմականացումը: Կարելի է նաև երեխաների գլխին դնել ծաղիկներ՝ դեղին, կարմիր, կապույտ, սպիտակ, և վրան փակցնել իր գույնի թիթեռ: Հիմնականում այն կախված է ուսուցչի (նաև աշակերտների) երևակայությունից, թե ինչպես ավելի հասկանալի և հետաքրքիր դարձնել պատմվածքի ուսումնասիրումը:

Վերջում կատարվում է բնագրի ամփոփում հարցերի միջոցով:

1. Ինչո՞ւ Արփենիկը գնաց դաշտ:
2. Ինչո՞ւ Արփենիկը ծաղիկ չքաղեց;
3. Ի՞նչ եք կարծում՝ թիթեռնիկներն իրոք ապրում են ծաղիկների վրա:
4. Մայրիկն ուրախացա՞վ, թե՞ տխրեց. ինչո՞ւ:
5. Ուրիշ ի՞նչ կարող է նվիրել Արփենիկը մայրիկին:
6. Դուք ի՞նչ եք նվիրում մայրիկին նրա ծննդյան օրվա առթիվ:

Նշելի է, որ տարրական դասարաններում՝ սկսած երկրորդ դասարանից, դասի ամփոփման ժամանակ որպես գրական տարրական գիտելիքներ որոշ տեղեկություններ պետք է տալ նաև պատմվածքի հեղինակի մասին:

Պատմվածքի ուսումնասիրման ընթացքում ուսուցիչը կարող է կիրառել խաղային միջոցներ: Խաղի ընթացքում երեխան սովորում է նոր բառեր, անուններ, քերականական պարզ կանոններ, օրենքներ, դատողություններ է անում, մտահանգումներ կատարում: Երբ պատմվածքը ողողված է լինում խաղի տարրերով, ապա այն զարգացնում է սովորողի ստեղծագործական կարողությունները, նրան պատճառում հոգեկան բավականություն:

Կրտսեր դպրոցականը, ինչ խոսք, ունի զարգացման բնախոսական, կազմախոսական, տարիքային և այլ շատ առանձնահատկություններ: Փորձենք նկարագրել կրտսեր դպրոցականի իմացական գործընթացները;

Երեխաները ծնվում են թույլ զարգացած, բայց անհրաժեշտ բոլոր զգայարաններով: Միջավայրի, ժառանգական նախադրյալների, դաստիարակության, ուսուցման և արտաքին ազդեցությունների ներգործությամբ աստիճանաբար ձևավորվելով՝ երեխաները ձեռք են բերում ինքնուրույնություն, անհատականություն, ձևավորվում է նրանց անձնավորությունը, անհատականությունը: Պատմվածքը կարող է ձևավորվել հատուկ բնավորություն, խառնվածք, հակումներ և

հետաքրքրություններ, ձգտումներ ու ցանկություններ: Պատմվածքը զարգացնում է մտավոր կարողությունները, լեզվական ունակությունները, հոգեկան հատկությունները: Կրտսեր դպրոցականն օժտված է տրամաբանական մտածողությամբ, սակայն չպետք է գերագնահատել կրտսեր դպրոցականի մտավոր կարողությունները և ավելորդ ծանրաբեռնել նրան: Անշուշտ, տարրական դասարաններում աշակերտներին անհրաժեշտ է տալ ժամանակի պահանջներին համապատասխան հարուստ բովանդակության վերացարկված և ընդհանրացված գիտելիքներ, այնպես ուսուցանել, որ երեխաները կարողանան յուրացնել այդ ամենը:

«Որպեսզի տարրական դասարաններում յուրացվեն գիտելիքներ,- գրում է Վ. Ա. Կրուտեցկին,- կրտսեր դպրոցականը պետք է տիրապետի համեմատաբար բարձր զարգացած դիտողականության, կամածին հիշողության, կազմակերպված ուշադրության, վերլուծելու, ընդհանրացնելու, դատելու կարողության»[1]:

Կրտսեր դպրոցականի ուղեղը տպավորվող է և արագությամբ կլանում է ամեն մի նյութ: Ինչպես նկատում է Ֆ. Գոնոբոլինը, «Շրջապատող իրականության մեջ շատ բան նրանց մեջ ի հայտ է բերում հետաքրքրություններ, հաճախ հիացմունքի աստիճանի հասնող ուրախ զգացումներ, ցնծություն, երբեմն անգամ անհամեմատ չնչին առիթից, որը չի կարող համապատասխան զգացում առաջացնել մեծերի մոտ և անգամ բարձր դասարանցիների աշակերտների մեջ»[2]: Պատմվածքների դասավանդման ընթացքում երեխաները կարողանում են յուրացնել և ըմբռնել նաև բառերի, նախադասությունների և խոսքի ուղղակի և փոխաբերական իմաստները, այլաբանությունները, իրական և հավանական թվացող դեպքերը, զատել իրականն ու անիրականը:

Պատմվածքները հասանելի են կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար. նրանք լավ յուրացնում են նաև ինչպես սյուժետային, այնպես էլ քնարական բնույթի ստեղծագործություններ: Սովորողները յուրացնում են գրական տարրական այնպիսի գիտելիքներ, ինչպիսիք են գրական հերոս, կերպար, սյուժե, գործողություն, դեպք, իմաստ և այլն:

«Կրտսեր դպրոցական տարիքում,- գրում է Վ. Ա. Կրուտեցկին,- դրվում են բարոյական վարքի հիմքերը, յուրացվում են բարոյական նորմերը և վարքի

[1] В. А. Крутецкий, Основы педагогической психологии, М., 1972, с. 42.
[2] Ф. Н. Гоноболин, Психология, М., 1973, с. 197-198.

կանոնները. սկսվում է ձևավորվել անձնավորության հասարակական ուղղվածությունը»[3]:

Այս շրջանում ձևավորվում են նաև գեղագիտական ըմբռնումներ, պատկերացումներ, իդեալներ: Այդ ամենն էլ անհրաժեշտ է հաշվի առնել կրտսեր կրտսեր դպրոցականի մտածողությունը ձևավորելու, զարգացնելու, աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար:

Պատմվածքների ուսումնասիրման գործընթացում մեծ է նաև հոգեբանության դերը: Յուրաքանչյուր մանկավարժ պետք է զինված լինի հոգեբանական գիտելիքներով: Տվյալ պարագայում հոգեբանությունը հնարավորություն է տալիս կազմակերպել փորձեր, դիտումներ, լաբորատոր և այլ միջոցներով պարզել երեխայի շատ հատկություններ հենց պատմվածքի ուսումնասիրման գործընթացում:

Ուսումնական գործունեության ընթացքում երեխաների մտավոր կարողությունների զարգացումը պետք է համապատասխանի նրանց բնականոն զարգացմանը: Դա նշանակում է, որ պետք է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի աստիճանական բարդացումը, մատչելիությունը, սիստեմատիկությունը ու հաջորդականությունը:

Որպեսզի դպրոցում պատմվածքների ուսումնասիրման ժամանակ տրված գիտելիքները երեխաների կողմից ըմբռնվեն խորությամբ, պետք է ընտրել ճիշտ ստեղծագործություններ, կարողանալ թափանցել սանի հոգու խորքերը, տեղյակ լինել տվյալ տարիքի երեխաների հետաքրքրություններից: Այդ ընթացքում կարևոր է զարգացնել երեխաների մտքի խորությունը, ճկունությունը, ինքնուրույնությունը, քննադատական կարողությունը և այլ դրական հատկություններ: Սակայն պետք է նկատել, որ անգամ վաղ տարիքից արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաներն էլ իրենց հոգևոր աշխարհով մնում են որպես մանուկ, որպես երեխա՝ պահպանելով այդ տարիքին հատուկ խառնվածքն ու բնավորությունը:

Ն. Մենչինսկայան և Մ. Մորոն ուսումնաընկալման կարողությամբ աշակերտներին բաժանում են երկու հիմնական խմբի:

Մի խմբի երեխաները ուսումնառության ժամանակ աչքի են ընկնում արագ յուրացնելու, բարձր կարգի վերլուծություններ և համադրություններ կատարելու, ընդհանրացնելու կարողությամբ: Հաջորդ խմբի երեխաները աչքի են ընկնում

[3] Վ. Ա. Կրուտեցկի, Մանկավարժական հոգեբանության հիմունքները, Երևան, 1976:

դանդաղ մտածելու, նյութը դժվարությամբ յուրացնելու, ցածր կարգի վերացարկումներ, ընդհանրացումներ կատարելու հատկությամբ[4]:

Նրանք յուրացնում են փաստական նյութը, որոշ գիտելիքներ են ձեռք բերում, սակայն այդ երեխաների մեջ թույլ է ներքին մտավոր ակտիվությունը, վառ երևակայությունը, կուռ տրամաբանությունը և, ամենագլխավորը՝ նյութի ստեղծագործական վերամշակումը: Չնայած չի բացառվում նաև առանձին դեպքերում, դանդաղ մտածող երեխաների լավ սովորելը, մտքի վերացական-համադրական բարդ կարողությունները: Երեխան պատմվածքի դասավանդման ընթացքում կատարում է վերլուծություն, համադրություն, համեմատություն, համակարգում և դասակարգում, ինչպես նաև կատարում վերացարկում, ընդհանրացում, կոնկրետացում և այլն: Պատմվածքի դասավանդումը պետք է կատարել բարձր մակարդակով: Պետք է օգտագործել գեղարվեստական հարուստ խոսք, լեզվի պատկերավոր միջոցներ, բառապաշար, արտահայտչական միջոցներ, դիմախաղ, ինչպես նաև դիդակտիկ նյութեր և այլ ուսումնական պարագաներ: Պատմվածքի ուսուցման ընթացքում երկու կարգի վերլուծություն կարելի է կատարել՝ պրակտիկ և տրամաբանական: Պրակտիկ վերլուծությունների ժամանակ մասնատվում են իրական կոնկրետ իրեր և առարկաներ և զատ-զատ ուսումնասիրվում առանձին մասերի կազմությունը, դրանց գործնական նշանակությունը ամբողջի մեջ: Տրամաբանական վերլուծության ժամանակ մասնատումը, առանձնացումը կատարվում են մտովի, երևակայության ու պատկերացումների միջոցով: Երեխայի միտքը սովորաբար սկսում է վարժվել տարրական կարգի վերլուծությունների և աստիճանաբար հանգում բարդ վերլուծությանը: Տարրական դասարաններում նյութի վերլուծությունը կարելի է միանգամից խորությամբ չսկսել: Այն պետք է ունենա զարգացման տարբեր աստիճաններ: Պատմվածքի վերլուծության և առհասարակ վերլուծության ժամանակ Դյուին առանձնացնում է տրամաբանական հինգ կարևոր կետ՝

1. Խնդրի բարդության ըմբռնում
2. Խնդրի բնորոշում և սահմանազատում
3. Հնարավոր լուծումների պատկերացում

[4] Н. Менчинская и Моро, Вопросы методики и психологии, обучения арифметике в начальных классах, М.,1965, с. 188.

4. Դատողությունների միջոցով այդ պատկերացումների զարգացում
5. Համապատասխան եզրակացությունների հանգում[5]:

Վերլուծությունը այն հետազոտական եղանակն է, առանց որի չեն կարող զարգանալ մտածողության գործընթացի հետագա աստիճանները՝ համադրությունը, վերացարկումը, ընդհանրացումը, կոնկրետացումը և այլն: Վերացարկումը իմացության ձև է, որը հնարավորություն է տալիս ամբողջից մտովի անջատել նրա որևէ հատկությունը, որևէ կողմը և այն հետազոտել մեկուսացված պայմաններում: Մերժելի է մանկավարժության մեջ տեղ գտած այն կարծիքը, թե ուսման առաջին տարում չպետք է աշակերտներին տրվեն լուրջ, վերացական ու մտքի լարում պահանջող աշխատանքներ, որ ուսումը այդ շրջանում ավելի շատ պետք է հաճույք ու զվարճանք թվա: Իրականության արտացոլման և մտավոր գործունեության անհարժեշտ ձևերից են նաև ընդհանրացումն ու կոնրետացումը: Վերջիններս տեղի են ունեում վերացարկումների միջոցով:

Ընդհանրացումները երեխաների մոտ հանդես են գալիս, որպես մտավոր գործունեության վերջնարդյունք և մտքերի համագումար: Նյութերն այնպես պետք է դասավորել, որ դրանք փոխադարձաբար լրացնեն իրար, երեխային կռահելու, դատելու, խնդիրներ առաջադրելու ազատ հնարավորություններ տան:

Նույն կերպ պետք է վարվել դասանյութը մասերի բաժանելու, պլաններ կազմելու, առաջադրանքներ մշակելու և այլ դեպքերում: Այնուհետև ընդհանրացման հետ մեկտեղ տեղի է ունեում կոնկրետացումը:

[5] Տե՛ս Дж. Дьюи, Психология и педагогика мышления, М., 1915, с. 63.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ՊԱՏՄՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

Որպեսզի պատմվածքի ուսումնասիրումն առավել արդյունավետ լինի, հարկավոր է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Գիտելիքների ինչպիսի՞ նախնական պաշար ունեն աշակերտները:
- Որքա՞ն է աշակերտների ընդհանուր թվաքանակը դասարանում:
- Որքա՞ն է հատկացված ժամաքանակը:
- Ինչպե՞ս կառուցել դասը, որ այն ընդգրկի ամբողջ նյութը և աշակերտներին ստիպի ինքնուրույն մտածել:
- Ինչպիսի՞ մեթոդներ կիրառել դասի ընթացքում:
- Դասարանը բաժանել խմբերի, թե՞ ոչ:
- Ինչպիսի՞ դիդակտիկ նյութեր օգտագործել:
- Ի՞նչ առաջադրանքներ կատարել դասարանում:
- Ի՞նչ առաջադրանքներ հանձնարարել տանը կատարելու համար և այլն:

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է:

Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- Դասի թեման:
- Դասի նպատակները՝ կրթական, զարգացնող, դաստիարակչական…
- Դասի տեսակը՝ նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման:
- Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում:
- Դասի ընթացքը:
- Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը:
- Դասավանդման մեթոդները՝ բանավոր, անհատական, համընդհանուր կամ զրույցի տարրերով պատմվածք:

Դասի պլանավորման համար կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝

- Դասի սկզբի կազմակերպում:
- Գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում:
- Աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ:

- Ծանոթացում նոր նյութի հետ:
- Գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում՝ կրկնություն, կատարելագործում և գիտելիքների ու կարողությունների կիրառում:
- Գիտելիքների համակարգում և ընդհանրացում:Տնային աշխատանքի կազմակերպում

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝ լինեն հստակ, իրական և բաց, այսինքն աշակերտը պետք է հասկանա՝ ինչ են իրենից պահանջում և ինչպես այն կատարել:

Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել ուղղություններ՝ «Դասի կառուցվածքային տարրեր», «Ուսուցչի գործունեություն», «Աշակերտի գործունեություն»: Յուրաքանչյուր դասի պլան պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշներ: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները:

Դասի տիպերը՝

Դասը դասակարգվում է ըստ դիդակտիկ նպատակների, գիտելիքների, կազմակերպման նպատակների, դասի անցկացման միջոցների և բովանդակության, ուսումնական գործընթացի հիմնական փուլերի, դասի ընթացքում լուծվող դիդակտիկ խնդիրների, դասավանդման մեթոդների և սովորողների կրթական գործընթացի կազմակերպման միջոցների: Դասի ոչ ավանդական ձևերն են՝

- դերային խաղեր,
- դաս-ներկայացում,
- մտապատկերների դաս,
- գործարար խաղ,
- դաս-մրցույթ,
- ստեղծագործական դաս և այն:Թեման՝ Ճուտիկը

Նպատակը՝ զարգացնել երեխաների մտածողությունը, բոլոր զգայարանները, հարստացնել բառապաշարը մի շարք նորածանոթ բառերով, տեղեկություն տալ

պատմվածքում առկա կենդանիների մասին:

Դասի ընթացքը՝

Խթանման փուլում. Առաջադրել հետևյալ հարցերը՝

- դուք սիրու՞մ եք կենդանիներ,
- ով, ինչ կենդանի է սիրում,
- պահու՞մ եք կենդանիներ,
- ինչպե՞ս եք վարվում կենդանիների հետ:

Իմաստի ընկալման փուլում կարդալ պատմվածքը, քննարկել:

Քննարկումն իրականացնել մտագրոհի մեթոդով՝ պարզելու, թե աշակերտները որքանո՛վ յուրացրին նյութը: Երեխաները մտագրոհի ժամանակ ճիշտ կողմնորոշվեցին և կարողացան նկարագրել ճուտիկին:

Այնուհետև աշակերտները քննարկեցին, թե ու՛մ էր ուզում նմանվել ճուտիկը և ինչու՛ էր ծիծաղում գորտը:

Այդ ամենից հետո երեխաները 5-րոպեանոց շարադրանքի միջոցով իր զույգի (կողքի նստած աշակերտի) հետ միասին թղթի վրա նշեցին հանդիպած կենդանիների անունները՝ ընդգծելով նրանց արձակած ձայները:

Որոշ աշակերտներ խառնել էին ձայները, բայց մեկը մյուսին ուղղելով՝աշակերտները ճշտեցին սխալները:



Կշռադատման փուլում իրականացրինք քառաբաժան մեթոդը:

Ի՞նչ կենդանիների հանդիպեցինք Ճուտիկ, հավիկ, փիսիկ, աքլոր, գորտ	Ի՞նչ ձայներ էին արձակում Ծվծվում էր, կչկչում էր, մլավում էր, ծուղրուղու էր կանչում, կռկռում էր
Ի՞նչ գույներ կամ գունանունների ունեին Դեղին, կարմիր, նարնջագույն, մոխրագույն, սև, կանաչ	Ի՞նչ հասկացանք Ճուտիկը մեծամիտ էր և ուզում էր նմանվել մյուս կենդանիներին: Իմացանք նաև, որ ինչպես բոլոր կենդանիները, այնպես էլ՝ պատմվածքի կենդանիները ունեն տարբեր գույներ, արձակում են տարբեր ձայներ:

Աշակերտները ծանոթացան պատմվածքի կենդանիներին, տարբերակեցին նրանց գույները, արձակած ձայնները, որը նպաստեց նրանց զգայարանների զարգացմանը,

հարստացավ նրանց բառապաշարը, տեղեկություններ ստացան շրջապատող կենդանիների, նրանց վարքագծի մասին: Մեր արթնացավ կենդանիներիհանդեպ:


Ըստ ստատիստիկ տվյալների դասգրքում գերիշխում են պատմվածքները
Հերիաթ
21%
Բանաստեղծություն
24%
Առած-ասացվածք Շուտասելուկ Հանելուկ
16%
Պատմվածք
39%

Հավելված 2

Հարցումներից պարզ դարձավ, որ աշակերտները ավելի շատ սիրում են պատմվածքներ ընթերցել



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, 1983:
2. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., Ինքնուրույն ընթերցանության նյութեր 2, Երևան, Էդիթ Պրինտ, 2010:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, Լույս, 2015:
4. Էլկոնին Դ. Բ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, Լույս, 1975:
5. Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքը, Երևան, Զանգակ-97, 2004:
6. Կրուտեցկի Վ. Ա., Մանկավարժական հոգեբանության հիմունքներ, Երևան, Լույս, 1976:
7. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, խմբ.՝ Ա. Պետրովսկի , Երևան, Լույս, 1977: